

# ARMENIAN CROSSWORD

## ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՉՔԱՌ (Արեւմտահայերէն տարբերակ)

### User's Guide

W

## ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՉՔԱՌ

«Հայկական խաչքառ» այս ծրագիրը նախատեսուած է համակարգիչի օգնութեամբ հայկական խաչքառեր լուծելու համար:

Առկայ է երկու տարբերակ՝ անհատական եւ արդի ուղղագրութեամբ:

Ծրագրի օգտագործման համար նախապէս ձեզ տրամադրուում է 16 խաչքառ, որոնք պարբերաբար համալրուում են նոր խաչքառերով:

Լրացուցիչ նոր խաչքառեր դուք կարող էք ներբեռնել համացանցի [www.armcrossword.com](http://www.armcrossword.com) կայքէջից, սեղմելով “Update new crosswords” կոճակը:

### SYSTEM REQUIREMENT

Ծրագրի աշխատանքի համար՝ համակարգիչի առումով յատուկ սահմանափակում չկայ, աշխատում է ներկայիս գործող Windows-ի բոլոր տարբերակներով եւ պահանջում է ոչ մեծ յիշողութիւն, որը մատչելի է արդի բոլոր համակարգիչների համար: Այն անբողջութեամբ ինքնաբաւ է (stand alone) եւ չի պահանջում օժանդակ որեւէ այլ ծրագիր: Չի պահանջում նաեւ հայկական որեւէ տառատեսակի առկայութիւնը: (անհրաժեշտ հայկական տառերը կցուած են ծրագրին):

### ԽԱՉՔԱՌԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ՀԱՍԱԿԱՐԳՉԻ ՕԳՆՈՒԹԵԱՄԲ:

Ծրագրի աշխատանքը սկսելու համար սեղմէք “ArmCross (West)” Icon-ը: Այն բացում է ներածական էջով, որտեղ պէտք է տրուի խաչքառի համարը: Բացի այս բացատրականից, այդ էջում դուք կարող էք ընտրել նաեւ խաչքառի ձեր նախընտրած գոյնը, յաջորդաբար սեղմելով “color” կոճակը, կամ վերադառնալ սեւ գոյնին սեղմելով “black” կոճակը: Իսկ բացատրականը տեսնելու կամ տպելու համար սեղմէք “Guide” կոճակը:

Այնուհետեւ մտցրէք խաչքառի ձեր ընտրած համարը: Սեղմէք “Enter” կամ “Start” կոճակը, անցնելու համար ծրագրի յաջորդ հիմնական էջին:

“Crossword number” հարցին պէտք է մտցնել ձեր համակարգչի մէջ արդէն իսկ ներդրուած խաչքառերի համարներից մէկը (նախքան լրացուցիչ խաչքառերի ներմուծումը այն հաւասար է 16-ի): Տուեալ համարի խաչքառի չգոյութեան դէպքում կը ստանաք “Crossword number doesn't exist” գրութիւնը: Շարունակէք մուտք անել խաչքառի ընդունելի համարը:

Յաջորդ էջը պարունակում է ձեր ընտրած խաչքառը եւ հարցերի հորիզոնական եւ ուղղահայեաց ցանկը: Խաչքառի հարցերը եւ համապատասխան վանդակները, ի տարբերութիւն տպագրուող խաչքառերի, **համարակալուած չեն**: Համակարգչի պարագային այն աւելորդ է եւ անտեղի, քանի որ օգտագործուած է շատ աւելի պարզ եւ յարմար ձեւ:

Ձեզ հետաքրքրող հարցը կամ բառը ընտրելու համար կարելի է օգտագործել “Mouse”-ը, այն սեղմելով տուեալ հարցի կամ խաչբառի ցանկացած վանդակի որեւէ մասում: Այս դեպքում միաժամանակ կը գունաւորուեն եւ հարցը եւ համապատասխան վանդակները (եթէ քառակուսին խաչմերուկային է, ապա նախ ընտրուում է հորիզոնականը: Յաջորդ սեղմումը կը փոխի ուղղութիւնը):

Վանդակների կամ հարցերի ընտրութեան համար “Mouse”-ի փոխարեն կարող էք օգտագործել նաեւ ստեղնաշարի ← → ↑ ↓ ստեղները, որոնք յատկապէս յարմար են, եթէ ընտրութիւնը կատարուում է հարցերի ցուցակից:

Ընտրութիւնից յետոյ մտցրէք տառերը: Տառերի մուտքի համար ձեզ տրամադրուում է հայկական ստեղնաշարի 2 տարբերակ (Phonetic, եւ Alphabet): Սեղմէք համապատասխան կոճակը ընտրելու համար տարբերակը եւ ստանալու ստեղնաշարի պատկերը: Սեղմէք այն կրկին՝ պատկերը վերացնելու կամ ստեղնաշարը վերստին պատկերելու համար:

Տառերի մուտքի ժամանակ կարող էք օգտագործել սրբագրման Backspace եւ Delete ստեղները: (Backspace-ը վերացնում է տառը, Delete-ը վերացնում է բառը ամբողջութեամբ):

( ! ) Որեւէ լրացուած բառ փոխելու կամ ուղղելու համար նախ պէտք է այն հեռացնել **ամբողջութեամբ** del-ի օգնութեամբ, այլապէս ոչ մի կերպ չէք կարող այն ուղղել:

( ! ) Եթէ օգտագործում էք ստեղնաշարի փոխակերպիչ (keyboard driver) այլ տառատեսակներ օգտագործելու համար, ապա պէտք է ընտրել ստեղնաշարի **անգլերէն** տարբերակը, հակառակ դեպքում այն չի աշխատի եւ տառի մուտքը կ'արգելակուի:

Եթէ հայկական տառեր մուտք անելու փորձառութիւն չունէք, տառերի մուտքը կարող էք կատարել նաեւ ստեղնաշարի պատկերի միջոցով՝ օգտագործելով Mouse-ը:

Մուտքագրուած բառը ֆիքսելու համար կարելի է օգտագործել Enter, որը աշխատում է **ամբողջութեամբ** լրացուած բառերի դեպքում (կիսատ լրացուած բառի դեպքում այն չի աշխատի): Չնայած Enter-ի օգտագործման համար որեւէ արգելք չկայ, սակայն այն անհրաժեշտ չէ, քանի որ յաջորդ բառի (կամ հարցի) ընտրութեամբ նախորդը **ինքնաբերաբար** ֆիքսուում է:

Նշենք, որ «դատարկ» բառ կամ վանդակ է համարուում նաեւ այն բառը, որը պարունակում է «ոչ սեփական» խաչաձեւուած այլ բառերի տառեր (տուեալ բառի սրբագրման կամ հեռացման ժամանակ դրանք չեն վերանում):

( ! ) Մուտքի ժամանակ բառը պէտք է հաւաքուի **ամբողջութեամբ**, ներառեալ խաչաձեւուող այլ բառերի առկայ տառերը, հակառակ դեպքում մուտքը կ'արգելակուի եւ տառը կը գունաւորուի զգուշացման համար:

Եւս ծրագրի օգտագործման մի բացառիկ հնարաւորութեան մասին:

Եթէ որոնելի բառը պարունակում է **գէթ մէկ** խաչմերուկային տառ, ապա սեղմելով Clue կոճակը, կը ստանաք ցանկը բոլոր այն բառերի, որոնք համապատասխանում են արդէն իսկ տեղադրուած այդ տառին (կամ տառերին): Եթէ ցանկը չի տեղաւորուում իրեն յատկացուած պատուհանին մէջ, յաջորդ էջը կարող էք ստանալ (կամ վերադառնալ նախորդին) օգտագործելով “Mouse”ը կամ ← → ստեղները: (Եթէ այդ տառերին համապատասխանող բառ չկայ կը ստանաք “No Match” գրութիւնը):

Եթէ ցուցակից անհրաժեշտ բառը ընտրուած է, ապա “mouse”ը տեղաւորելով այդ բառի վրայ եւ սեղմելով Mouse-ի սեղմակը, բառը կը գրանցուի խաչբառի համապատասխան վանդակում:

Մինչ այդ, որեւէ ժամանակ “Clue” ռեժիմից դուրս գալու համար սեղմէք Enter կամ կրկին սեղմէք Clue կոճակը եւ կամ ընտրէք յաջորդ բառը կամ հարցը, օգտագործելով “Mouse”ը կամ ← → ↑ ↓ ստեղները:

( ! ) “Clue” կոճակը չի գործի, եթէ չունէք լրացուած պատասխանների բաւարար քանակ: Հետեւեցէք կոճակի ներքեւի նշակւերին, տեսնելու համար տուեալ պահին ձեզ տրամադրուող Clue-ների քանակը:

Մասամբ լուծուած խաչբառը յետագայ օգտագործման նպատակով պահելու համար, սեղմէք “Save” կոճակը (ի հարկին կարող էք անջատել համակարգիչը): Որեւէ ժամանակ այն կրկին վերականգնելու եւ աշխատանքը շարունակելու համար սեղմէք “Load”:

Նշենք նաեւ, որ կարող էք **միաժամանակ** լուծել տարբեր խաչբառեր իւրաքանչիւրի համար “save”ի միջոցով, պահելով միջանկեալ արդիւնքները:

“Solution” կոճակը սեղմելով դուք կը ստանաք տուեալ խաչբառի լուծումը: Սակայն այն չի գործի, քանի ձեռք չէք բերել այն օգտագործելու **իրաւունքը**: Այդ իրաւունքը կախուած է ձեր գտած բառերի քանակից եւ խաչբառի լուծման համար ձեր տրամադրած ժամանակից: Տեսնելու համար թէ ինչքանով էք մօտեցել այդ իրաւունքին, հետեւեցէք կոճակի ներքեւում տեղաշարժուող կանանչ նշագծիկին:

Ցանկանում ենք ձեզ հաճելի ժամանց:

Ուրախ կը լինենք ստանալու ձեր դիտողութիւնները

Ծրագրի հեղինակ: Օննիկ Փիրումեան

Author: Onnik Piroumian

Tel: 9808 5795 - Email: piroum@ihug.com.au